

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 29

17 ՅՈՒԼԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առուեսը կրօնքին մեջ. ՀԱՐՄԱԿ.—Տպաւորութիւններ (Կ.Ս Իւրիւնեանի մահուան առթիւ)
Տ.Ա.—Վերջին լոգանքը. ՄՈՒՇԵՂ, ՎԱՐԴԱՊԵՏ.—Աղջկան մը օրագիրէն քաղուած. ՄԱՌԻ
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ.—Սիւլանքա (Նորավայ) ՍԷՆՔԻՎԻԶ. քարգմ. ՍԱՐՈՐԴԻ.—Հանգրը.
ւանս (Սիրերգ) Մ.Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ.—Բժեկական աշխարհէն.—Խմբագրական նօթք.—Մար.
գրիք (Արձակ բանաստեղծութիւն) քարգմ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառսուն դրո.
եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 րուպի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու
թիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար
կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչի պայ
մաններով:

Զեմ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته می اداره می

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդայիոն ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոյ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օրէքա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, Նաեւ Պօլտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ ար Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտանքի, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմետ փաշա, Պէօլիք Երլազ Խան, թիւ 14, Լա Դօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆար վաճառատուն մը, Եսեկայ Սահաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծարի յանձնաւորութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎՂԴՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆւասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆւասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»-ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ՁերՄ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bônéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻՍԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏՅՈՐԷՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթըրնը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լինայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

1—10



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 16

Զբոսանեան արաւոքման

Պալպալեան ամէն օր ազգայի ամէն տե՛սակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան որ եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լիցուցած ու շինած ազգանկրը: Յորեկները ազգայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախեալ է: Վկայեալ առամնաբաւ՝ ժուհի Տիկին Բօլին եւս կը գանուիմիշտ նայն դարմանաւ մէջ: Աղփայեցեալն ձեռք 1—10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Վ Կ Ա Ց Ե Ա Լ

ԼԻՏԵՐ ԱՏԱՄՆԱՐՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

Ե Ի

ՊԱՇԵՐԷԻ ԺԵՆՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

Կը բուժէ ազգայի ամէն տեսակ ցաւեր եւ լինաւոր հիւանդութիւններ, կատարեալ գործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի ամէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՕՆԷՐԻ դիմացը Կլավանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց ազգայ քաշելը ձեռք է:

1—10

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհի ծանօթ ղեղով կատարելապես կը բժշկուին:



SCOTT'S EMULSION

Հաշ, հարբուխ, և բոլոր որկորի և թորի վիշտերի ինչպէս թոյաշաւ, և պրծնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատճառող անհաստութիւններ՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուին և վերջապէս կը բժշկուին: Այսու նաւանդ ծիրական ակտի նկատմամբ՝ առաջին նշանն առանձնաձ առնել, անմիջապէս առաջըր կ'առնէ: Եւ ընտանիքի մը մէջ այսպիսի տպւտ մը կայ, պէ՛տ ղեղարան մը զիմեւ և

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ

մը առնել: Ըսգոթի Բողաղրութիւնը այս աղետը դադարեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները կ'առնեն:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

19

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Թ. ԻՍԱԿՈՒԼԵԱՆԻ Ձինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն և Սէյլանէն ուղղակի բերել տուած բարմ, հոսաւեհ և առողջարար թէյերէն, որոնք ամբան եղանակին յարմարագոյն ըմպելին են:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:


Մասնաճիւղեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ. նոյնպէս Եգիպտոս: 2-10



ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէ՛ք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժա՛ն ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան և թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 ղեղէ: Դործածուած գոհարեղէնները եթէ մնասուած չեն՝ 100ին 10 ղեղով ետ կ'առնուին. իսկ ապառիկ դրնողներէն՝ 100ին 15 ղեղով: 2-10

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ՔԻԻ 29

17 ՅՈՒՆԻՍ 1904

ԱՐՈՒԵՍՏԸ ԿՐՕՆՔԻՆ ՄԷՋ

Գեղեցիկը, ճշմարիտը և բարին, իրենց առանձնական կալուածներուն մէջ կը համադրեն կեանքին բոլոր ոյժերն ու երեւոյթները: Արուեստը իբրեւ ճշմարտին փայլը և գեղեցկին այլազան մարմնացումը՝ իր մէջ կը ցոլացնէ մարդկային հոգիին կրօնական և դիտական հոսանքները, որոնք ընդհանրապէս զուգահեռաբար կ'ընթանան: Արուեստագէտը՝ զգայնիկ բոյսը, վճիռ հայելին է, ուր իր միջնորդութեամբ, իր շրջակայէն բխող ճառագայթներ կ'իյնան, զորս հարկւրապատիկ ու ժգնութեամբ կ'անդրադարձնէ:

Կրօնական զգացումը իբրեւ հոգիին հեծադոյն ոյժը միշտ արուեստ մը ծաղկեցուցած է իր շուրջը: Նկարչութեան, երաժշտութեան, քանդակագործութեան և ճարտարապետութեան բարձրագոյն արտայայտութիւնը հաւատքին փթիթումն է: Կրօնական բուռն տենչանք մը կամ գաղափար մը մարմնաւորելու ճիգեր են Պուտտայական բագոցները, Յունական մեհեանները, ձիւնափառ Պարթեոնը որ կը պսակէ Ակրոպոլը, Բաալպէլի աւերակներուն վրայ բարձրացող հսկայ սիւնները որ երբեմն լուսոյ աստուծոյն մեհեանը կը յորինէին, քրիստոնէական մայր տաճարները (cathédrale), բիւզանդական մայր եկեղեցիները (basilique): Նոյնքան բանաստեղծական վսեմ թռիչքներ ի յայտ կը բերեն Վետայի նուաղները, հնդկի գիւցաղ-նկերութիւնները, Բաբելոնի նաւիրական քերթուածները, Ուրփէոսի առածները, ուր երգիչը ոգեւորուած է անհունին զգացումովը, զոր կը ներշնչեն իրեն մայրամուտ արեւին բոսոր չառայլները, ովկիանոսին լայ-

նածաւալ շրջանակը, չարժուն օդը և երկնից լուսազարդ կապոյտը:

Որոշ շրջանի մը արուեստը՝ իր ժամանակին տիրապետող գաղափարը, զգացումները, կամ մեծ կիրքերը կ'արտայայտէ: Եզրայական Սաղմոսները արուեստական գեղեցկութիւններով Աստուծոյ և Օրէնքին սէրը կ'երգեն: յունական արուեստը՝ գեղեցկութիւն և ոյժ, Հռոմէականը՝ երջանկութիւնը:

Սակայն արուեստը որ իտէալին սուսաարկուն է, հաւասարապէս օժտած չէ ամէն ժողովուրդ իր փափկանորհ օծութեամբը: Սեմականներուն կը պակսէր արուեստական, գեղեցկադիտական թռիչքը: Հրեաներուն մէջ՝ աստուածութիւնը պատկերով ներկայացնելու բաղձանքին դէմ սաստիկ պայքար մը կը մղուէր այլասէր քաղաքակրթութեան ներկայացուցիչ տարրին և մարգարէական դպրոցին միջև: «Արծաթէ և ոսկեղէն պատկերներ պիտի չլինէք» կը պատուիրէր Եհովան. «Սեղան մը կանգնած ատենդ պէտք չէ որ կոփածոյ քարերով շինես դայն. վաճառի ուր քու դուրդը կը դպչի, կը պղծուի այն»: Սեմական և յունական գեղեցկագիտութեան հիմնագիծերը ներհակ են իրարու: Ը. և Թ. դարերուն պատկերամարտութիւնը յոյժ նշանակալից է անով, որ սեմական ժուժկալ, պարզասէր ոգին կը պայքարի պատկերի յարգութեան դէմ և անիմատ կը դառնէ դօրութիւն փնտուել անկենդան քարին կամ փայտին մէջ:

Իսկ Յիսուսին դիրքը շատ որոշ է արուեստին հանդէպ. Նա անտարբեր է ամէն երկրաւոր գեղեցկադիտական արժէքի մա-

սին: Բայց դարձեալ քրիստոնէութիւնն է որ՝ բարձր արուեստով մը՝ իր տպաւորութիւնները, իր յախշտակութիւնները կ'իրադրծէ բոցանշոյլ կոթական (gothique flamboyant) ճարտարապետութեան մէջ, ղէպի անհուն ձգտող այգ վսեմ սլացքը, որուն փափուկ բանաստեղծութիւնը կը յառկանէ Միջին Դարը իր արտակարգ ղգացումներովը, իր խռովայոյղ ներշնչումովը և իր մեղամաղձիկ խորհրդապաշտութեամբը: Եւ ասիկա իրաց բնական հետեւանքն էր: Քրիստոնէութիւնը՝ իր քարոզութեան շրջանին մէջ՝ աննկար տախտակի մը (table rase) կամ անձեզանգութիւն մը հանդէպ չպիտի գտնէր ինքզինքը, որուն կտրենար անմիջապէս իր դրոշմը տալ, այլ հասունութեան շքեղ պտուղներով ակաղձուն և միանգամայն անկումի խտանիչներ իր վրայ ցուցնող բարձր քաղաքակրթութեան մը գետնին վրայ կ'իյնան իր սերմերը: Ուստի, եկեղեցին՝ արուեստէն՝ իրեւ աշխարհականացման հզօր աղբակէ մը խորշելով հանդերձ, յետոյ պիտի որդեգրէր անոր բոլոր պերճութիւնները, և մահաշուք կրօնքը կեանքին շքեղութիւնը պիտի ղգենուր:

Բայց արուեստին մուտքը յոյժ յամրօրէն կատարուած է: Դ. դարու եկեղեցին պարզ է և անարուեստ. ո'չ ապակեփեղկեր, ո'չ մանկար կը գեղադարձեն ղայն. ո'չ վեհաշուք արարողութիւններ, ո'չ պերճ ղգեստներ, ոչ երկնային երաժշտութեան մը ներդաշնակութիւնը, ղի «Մարդկային ձայնը միակ արժանաւոր տաւիղն է Աստուծոյ խօսքին»: Բարեպաշտիկ ղրոյցներու անուշ մըթնորոտ մը կը ծաւալի և տաճարին դրան վերեւ խաղաղութեան խոստում մը կը կարգաս—Մուսք բարի. ել լաւագոյն: Կռապաշտութեան անհետացումով, հետգհետէ քան. ղակներ, ղարգադրուազներ կը ծածկեն պատերը, անօթները և սպամները, ու գետնադամբաններու խորհրդապաշտութիւնը իրապաշտական ամենաշքեղ տիպարներու կը փոխուի:

Խնդիր է թէ բոլոր գեղարուեստները հասարակապէս նպաստաւոր են կրօնական

ղգացման ղարգացումին: Նկարչութիւնը և քանդակագործութիւնը չեն նկարկանացներ և բաժներ ղայն բաղմաթիւ առարկաներու մէջ, մինչդեռ ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը և բանաստեղծութիւնը իրենց համադրական նկարագիրովը կը նպաստեն հոգեկան պաշտումին:

Երաժշտութիւնը գերադանցապէս կրօնական արուեստ մըն է որ կըսկսի հոն՝ ուր կ'աւարտի խօսքը, որ կը դղրդէ մեր էութիւնը այն խորութեամբ, ուր ֆիզիքական և բարոյական կեանքը իրար կը խառնեն իրենց աղբիւրները, և ուսկից միասնաբար կը ցայտեն: Երաժշտութիւնը ամենահին ժողովուրդներու մէջ պատուոյ տեղ մը կը ղրաւէր: Եգիպտոս իր երգիչ քրմուհիներն ունէր. Աղեքսանդրիոյ մէջ մեծ ղպրոց մը կար ուր կ'ուսանէին երգիչներն ու երաժիշտները: Երգը անբաժան և հրապուրիչ տարրն էր կռապաշտական և հրէական կրօնային արարողութիւններուն, ղիցաբանական պաշտաման, հասարակաց տօներուն, ընտանեկան կեանքի հանդիսաւոր պարագաներուն, թատրոններուն և forumներուն: Քրիստոնէութիւնն ալ տեղի տուաւ այդ համաշխարհիկ հոսանքին առջև, և իր բանաստեղծ պաշտօնեաները, — Եփրեմ, Ոսկեբերան՝ արեւելքի մէջ, Ամբրոսիոս, Օգոստինոս՝ արեւմտքի մէջ, սկսան նուագներ յօրինել և մեղեդիներ պատշաճեցնել քրիստոնէական վարդապետութեան:

Արեւօք գեղեցկին պաշտամունքը ղի հակասեր քրիստոնէութեան ոգիին և աշխարհայեցողութեան, որ երբեմն կը ղփոթուէր ճգնաւորական գրաւիչ յարացոյցին հետ: Պատշաճ է որ գեղարուեստները, որոնք հասարակաց վայրերու—թատրոն, ղքօսավայր, սալօն—իրենց լիալիր պերճանքովը ի յայտ կուգան, նաև իրենց բովանդակ աշխարհիկ շքեղանքները ցուցադրեն սըրբավայրերու մէջ: Անշուշտ անտեղի է ոյդ մասին վճռական և անձկամիտ ըլլալ: Արուեստը սկզբունքով իր գոյութեան իրաւունքը պիտի պահէ կրօնական իրերու մէջ: Մարդիկ ինչպէս իրենց էութենէն բղխող

ամէն ազնուագոյն բանը՝ արուեստին ալ բարձրագոյն հրաշալիքներն ի սպաս կը դնեն Աստուծոյ փառքին։ Ու մէկը կ'ըսէ սրբութեան ծարաւով մը եկեղեցին կը մտնէ, ինքնամիտի՝ իր հոգիին խորը աստուածային երանութեան մը քաղցրութիւնը զգալու տենչով, անոր համար ինքնին անկարեւոր հարց մըն է թէ պէ՞տք է ծաղիկ կրել լամբակին կամ փեղոյրին վրայ։ Կրօնական զգացումը այլամերժ չէ. նա կրնայ՝ զարգացած մարդուն մէջ՝ կեանքին ամբողջը կազմող ոյժերուն հետ համերաշխ ըլլալ և իր ազնուացնող յատկութիւնը պահել։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Արմաւ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆԻ ՄԱՀՈՒՆ ԱՌՔԻԻ)

Բ.

Առաջին տպաւորութիւնս՝ Իւթիւճեանի մահուան վաղայաջորդ օրը՝ իր վերջին տարիներու մարմնական տկարութեան ու հոգեկան ընկճումին նուիրուած քանի մը տողեր եղան։ Դէպի ետ երթալով քանի մը տարիներ, կը տեսնեմ զինքը իր գործունէութեան վերջին շրջանին մէջ, 1898ին, երբ Մասիսը իբրեւ մեծածաւալ օրաթերթ սկսաւ հրատարակուիլ գրադէտներու խումբի մը կողմէ որուն վարիչն էր Զօհրապ և հովանին՝ Իւթիւճեան։ Ծերունի լրագրապետը այս անգամ պարզ արտօնատիրոջ հանգամանք մը չէր որ ունէր, այլ կը մասնակցէր թերթին խմբագրութեան, ատեն ատեն յօդուածներ գրելով, երբ կոչուէ կ'ըլլար իրեն, Մազկազարդի բացառիկ թիւին մէջ, — որուն գրական ու նիւթական յաջողութիւնը եզակի բան մը եղաւ, — պատուոյ տեղը իրեն տուին՝ գրելու համար Հիւանդանոցին վրայ, որուն պիտի նուիրուէր այդ թիւին հասոյթը։ Ուրիշ առիթներով ալ, երբ օրուան խնդրի մը, այժմէութեան մը շուրջը լրագրական պայքար մը մղելու կը պատրաստուէր թերթին

պատուակալ խմբագրութիւնը, նորէն Իւթիւճեանին կ'առաջարկուէր՝ առաջ անցնիլ ծեր նաւուղիդի մը պէս որ վարժուած է փոթորիկներու և որուն պիտի հետեւէին երիտասարդ նաւաղները։ Պարագաներ կային ուր կը դեղեւէր, կը վարանէր. բայց չէր ուղիւր դասալիք ըլլալ, տեղի տալ. ու գիշերուան մը աշխատութեամբ, գոհացում կուտար եղած խնդրանքին, ճարտարօրէն գործուած յօդուածով մը որուն ետեւէն կը հասնէր Զօհրապ, բուն խմբագրականով մը՝ կարուկ, լեցուն, աղուոր պարբերութիւններով, կուռ գաղափարներով։ Եւ անա՛ վիճաբանութիւն մըն է կը ծագէր թերթերուն մէջ. և Մասիսին արտօնատէրը, թէ և առանց չփոթելու և պաղարիւնը կորսնցնելու, տեսակ մը զարմանքով կ'անդրադառնար թէ բանավէճին առաջին կայծը ինք բռնկցուցած էր. նախայարձակը ինք եղած էր՝ անդգալաբար, գրեթէ ակամայ։ Բայց, իր ապրած մարդու, շատ բան տեսած լրագրապետի անայլայլութեամբը՝ քմծիծաղով մը հանդիսատես կ'ըլլար լուեկեայն, մինչև որ վէճը կորսնցնէր իր սաստկութիւնը ու փոթորիկը դադրէր։

* *

Զօհրապին անունը տուի, և պէտք է ըսեմ թէ, ժամանակակից գրադէտներուն մէջէն, Իւթիւճեանին ամէնէն աւելի սիրելի դէմքն էր գրադէտ — փաստաբանը որ, փոխադարձաբար, անխառն համակրանք մը ու անկեղծ մեծարանք մը ունէր անոր նկատմամբ, որուն թերթին խմբագրապետութիւնը վարած էր քանի մը տարեշրջաններ, ու անկէ դուրս ալ՝ միշտ իր նախասիրած, իր մտերիմ թերթը նկատած էր Մասիսը որուն միայն կը նուիրէր իր աշխատակցութիւնը։ Ու շատ անգամներ, խօսելով ծերունի լրագրապետին վրայ, դիտել կուտար թէ ի՞նչ տուր հեգնութիւններ. ի՞նչ սրամիտ դիտողութիւններ ունի անիկայ լեզուին ծայրը, ի՞նչ յատկանշական բացատրութիւններ որոնք ամբողջ ուսումնասիրութիւն մը, պատկերացում մըն են անձի մը, կամ գործի մը, կամ գրուածքի մը։ Բայցի այդ 1898ի շրջանէն,

քիչ անգամ ուղղակի հաղորդակցութեան մէջ եղած էին իրարու հետ և լաւագոյն էր այսպէս, որ մտաւորական տեսակ մը հաղորդակցութիւն, հեռուէ հեռու, մտերմացներ զանոնք իրարու՝ քան զբոլոր առօրեայ գործակցութիւն մը որ գաղափարներու բաղխումներ կարծիքներու ընդդիմօթիւններ ստեղծէր թերեւս մէջերնին։ Այդ 1898ի շրջանին, օրաթերթ Մասիսի խորագրատան մէջ, արշալոյսին կը հասնէր Զօհրապ ու իր բեղուն գրով գրելով օրուան խմբագրականը, յաճախ յաջորդինն ալ, կը մեկնէր իր փաստաբանական գործերուն, մինչ իւթիւճեան կը հասնէր կէս—օրուան մօտ, երբ թերթը մամուլի յանձնուելու մօտ էր արդէն, ու թիկնաթուղին մէջ ընկողմանած, փորձերը կըսկսէր կարգալ, դիմագծերու պրկումով մը որ իրեն յատուկ էր և որ շատ բան կը նշանակէր, անխօս ձեւի մը տակ։ Այս կերպով, բնաւ բաղխում, վէճ չունեցան իրարու հետ։

Այս մանրամասնութիւնները, որոնք լրագրական կեանքով ապրողներուն համար միայն թերեւս շահեկանութիւն մը ունենան, ամէն բանէ առաջ կ'ապացուցանեն թէ ճշմարիտ արժանիքը գիտէ գնահատել ճշմարիտ արժանիքը, փոյթ չէ թէ մէկը նոր մը ըլլայ ու միւսը հին մը, մէկը երիտասարդ ու միւսը ծեր, ինչպէս Աճեցացած սերունդին հեղինակը ու Մասիսին արտօնատէրը։

Ըսուեցաւ արդէն թէ, վերջացող դարուն երկրորդ կիսուն կենդանի յիշատակարանն էր իւթիւճեան։ Եւ իրաւ ալ, չիկար դէպք մը, թուական մը, անհետացած դէմք մը զորս երէկուան պէս չյիշէր, թէ և քառասուն—յիսուն տարուան անցելի մը պատկանէին։ 1900էն ի վեր, ամէն անգամ որ ծանօթ անձնաւորութիւն մը կը մեռնէր, գրականութեան, լրագրութեան կամ հանրային կեանքի մէջ զիրք մը գրաւած ատենօք ու համբաւ մը շահած, շունչս իր տունը կ'առնէի։ Իւթիւճեան, որ արդէն լուրը իմացած կ'ըլլար առաւօտէն, միամիտ ձեւով մը կը հարցնէր։

—Նորէն ո՞վ է մեռեր նայինք։

Ու, առանց աճապարելու, մեղմ դանդաղ խօսուածքով մը, կըսկսէր անդրադառնալ դէպի մեռնող ծերունիին գործունէութեան շրջանը, և փոխանակ քանի մը ցամաք նօթեր տալու՝ կը պատկերացնէր այդ թուականին անձերն ու անցքերը որոնց խառնուած կ'ըլլար ինքն ալ իրեւ լրագրագետ ու ժողովական։ Այդ յետադարձ ակնարկները վայրկեական կենդանութիւն մը կուտային իրեն, մտքով ու մարմնով, և բազմոցին ալ կ'ընէր, կը ցցուէր, կ'երիտասարդանար։ Անցեալին վերջիւումը կը մոռցնէր, կը փառանքէր իր ներկային յոգնածութեան ու մեկուսացման տպաւորութիւնը։ այդ վայրկեաններուն պէտք էր լսել զինքը, իր համով հոտով ասուլիսները, իր յատկանշական անէկտոդները։ Մութը կոխած կ'ըլլար արդէն ու ճրագները վառուած։ Բայց իւթիւճեան չէր յոգնէր։ Յետոյ, բերել տալով իր այս կամ այն թղթածրարը, իրենց նախնական գոյնը կորսնցուցած, ծալուածքին տեղերը պատառուն նամակներու դէպքեր, —որոնք հնութիւն կը բուրէին, —խնամով կը պրպտէր, կը հանէր իր գտնել ուզած գիրը զոր հանգուցեալը գրած ըլլար վաթսուսական թուականներուն կամ անկէ առաջ։

Այսպէս ցոյց տուած է Ապրօ Էֆէնտիին, Մ. Մամուրեանին և ուրիշ ծանօթ անձնաւորութեանց երիտասարդութեան նամակները որոնցմէ մէկ քանին ընդօրինակած ու հրատարակած եմ Մասիսի մէջ, իր հաւանութեամբը։ Իսկ հիմայ որ ինքն ալ անհետացաւ, իբրեւ վերջին ու պատկառելի ներկայացուցիչը սերունդի մը որ գրականութեան, լրագրութեան ու կրթութեան ծաւալման անդրանկ ու կորովի մշակներն եղած է, չեմ գտներ շուրջս մէկը որուն կարենամ դիմել և որ նոյն հարադատութեամբ, նոյն շահեկանութեամբ կենդանացնէր իւթիւճեանին երիտասարդութեան յիշատակները ու երկիւղածօրէն պահուած թղթածրարի մը մէջէն հանէր անոր երիտասարդութեան նամակները՝ այս էջերուն մէջ արտագրելու համար։ Իր մահով՝ կ'անհետանայ ո՛չ միայն հին մեծ լրագրագետ մը ու գրչի բազմար-

դիւն վաստակաւոր մը, այլ նաեւ կենդանի յիշատակարան մը և համայնապատկեր մը մոռցուած դէպքերու ու դէմքերու: Եւ երբ, լրագրութեան մէջ կը գրուի իր վրայ, ղինքը ներկայացնելով այս կամ այն տեսակէտով, մասնիկներ պատմուելով իր անցեալի կամ ներկայի կեանքէն, իմ տպաւորութիւններս կուգան կը խտանան, կը կեդրոնանան դէպի իր սիրելեական ու օրհնեալ անկիւնը ընտանեկան յարկին որուն նահապետն էր, ինչպէս կոչեցին ղինքը նահապետը հայ լրագրագետներուն, և որ թափուր կը մնայ այսուհետեւ առ յաւէտ:

Տ. Ա.

ՎԵՐՋԻՆ ԼՈԳԱՆՔԸ

Այն օրը շատ յոգնած կըզգար ինքզինքը: Բանի մը օրերու կեանքի տաղտուկը ուժգնօրէն պլլուած իր սրտին, մղձաւանջի պէս օղակ մը դրած էր իր լանջքին շուրջ, ճնշող ու պրկող, և մութ գաղափարներու հոսանք մը, որ մոռցուած լքուած ըլլալու մտացորութենէն կը ծնէր, գողցած էր իրմէն հոգիի հանգիստը և այն պայծառատեսութիւնը, որ իրեն թոյլ կուտար երբեմն իրերն ու մարդերը իրենց բնական ժպիտին ու շարժուկացին մէջ տեսնելու:

Իր մէջ տեղի ունեցող այդ դիպուածային ու միանգամայն հղօր փոփոխութեան պատճառներուն գիտակցութիւնը կը պակսէր իրեն: Անձանօթ ազդականներու, որոնք յաճախ գոյութիւն անգամ չունին իրականին մէջ, վերլուծուած ճանաչումը չէ որ կը ոտրսեցնէ հոգիները և սրտերուն կուտայ ընկճումի կենսատեսաց մոլորանքը: Մարդկային բաղձանքներու հրայրքը, իր զրգուռմի գերազոյն թափին մէջ, խոտոր մտածումներու կը տանի միտքը. անկէ կը հեռացնէ բուն իսկ իրականութիւնը. յստակ ու միանգամայն խոստացող, և անոնց տեղ կը բերէ կը ընուին որ յոռետեսութիւն կ'առթէ: Միտքի այս արտակարգ գործունէութիւնը կը վերայայտնէ մանաւանդ մարդկային կեանքի այն շրջանին

որ փոխանցումի օրջան կը կոչուի և ուր խորհուրդները, մտածումները և նայն իսկ զգացումներն ու բաղձանքները իրենց յարակարծ զարթումին մէջ կը բերեն եռք մը դնել մարդերու յուշումնալից լանջքերուն խորը, զիրար վերջնդոտնելով, տարակարգօրէն իրարու տեղ բռնելով, և ենթակաները հանդիսատես ընելով մառախլոտ ու աղջամղջային փոփոխականութիւններու: Անոնք, սակայն, որոնք գիտցած են իրենց անձին տէրը մնալ շարունակ, անոնք վայելած են անձամբ այդ շրջանէն վերջ մարդուս հոգիին խորը բուսնող այն երջանիկ հանգարտութիւնը, որ փոթորիկներու յաջորդող վճիտ երկինքի մը բոյրը կուտայ, խաղաղ ու լայն հորիզոններու կապոյտովը:

* *

Ինքնակորոյս՝ խարխափումներու մէջ, ու ցնորակոծ՝ իր յուսահատութիւններուն գիրկը, ծովին բարեկամը եղած էր հետզհետէ: Շատ անգամներ, լուռ ու մտամիտի նստած էր ծովկերքի խարախներուն վրայ, ուր քանի մը թուփեր հովանի մը կը շինէին իր գլխուն և սեւամաղձ դրդուանքով մը դիտած էր այն հեղուկ հայելացումը, պղտոր, գորշ, կապոյտ ջուրերուն, որոնք հետզհետէ կը մրմնջէին, կ'ոռնային, կը փրփրայուէին, կը խաղալէին ու կ'ուռէին, և որոնք իրենց ամէն մէկ փոփոխութիւններու իբրեւ յանկերգ սեւով խառնուած համըրքի մը ցաւազին հառաչանքը կը բերէին փչել ծովափը, իր ոտքերուն տակ: Եւ նաւակները, որոնք իր մօտէն կամ հեռուէն կ'անցուդարձէին, իրենց ճերմակ առադասանքը պարզած կարապի մը ամեհի թեւերուն նման, և ծովածիծառներու վազքոտ երամբ, որ կորսուած սէրերու մօլի բախտախնդիրներու անդադրում, յամառ վառքը կը թեւածեն, կուրծքերին ծովին քսելով, կը պատկերազրէին իր ներշնչութեան խօլ վնասուքը, իր ցնորակոծ զգայնականութեան դետնաքար թռիչքը դէպի անձանօթ ալիքներ, ուր իր հասնող քայքայուող հոգին, ի զուր կը փնտռէր հանգիստի լաստակ մը, պահ մը երանաւէտօրէն շնչելու և վայելելու կեանքի

ձանձրոյթին յաջորդող երջանիկ վայրկեանսն երու դադարը :

Բժիշները ծովի լողանք յանձնարարած էին իրեն :

Առաւօտ և երեկոյ, ան իր ծրարը անու-
թած, կ'երթար շարունակ դէպի ծովափը :
Ժամերով կը դիտէր, սակայն, ծովը և այդ
յամբորէն հատցնող զիտանքը գիւթող տը-
պաւորութիւն մը կ'ընէր իր վրայ : Ծովը
մտնելէ առաջ ժամերով կը դեղեւէր, կը
տատամաէր, իր ընթացքին ու իր շարժում-
ներուն վրայ անվստահ հոգիի մը բոլոր պա-
ղարին խռովքովը : Եւ յաճախ առանց իր
լողանքը ընելու, տուն կը դառնար, խա-
բելու իր մօրը մատաանջութիւնները, որոնք
այնքան լուռ արցունք թափել տուած էին
անոր :

* *

Գիրքերու այդ մեծ սիրահարը, այդ յա-
մառ բարեկամը, ա'լ սկսած էր նոյն իսկ
անոնցմէ ձանձրանալ : Յոռետես իմաստասի-
րութիւնը պղտոր յափրացում մը դրած էր
իր մէջ : Ժամերով գրասեղանին կ'ըսէր, իր
այրուող ծնօտը երկու ամիսներուն մէջ, կը
նայէր գրքին բացուած էջերուն վրայ, որոնք
օրերով չէին չըլի բնաւ : Անքուն գիշերներ
րու երկար ու տաղտկալի տողանցութիւն մը
կաթիլ կաթիլ քամած էր իր կեանքէն այն
կենսականութիւնը, առանց որու կեանքը
ստուեր մըն է և հանճարը՝ ջլախտ : Եւ օրէ
օր իր տագնաւած մօրթին տակ կը մեռնէին
իր ջիղերը, և իր ոսկորները դուրս կը ցըց-
ուէին, թեփոտած մօրթի մը բանտումին
դէմ ընդվզելով : Եւ այդ մարմնային քայ-
քայումը, որ հոգեկան ցուրտ սնանկութեանը
կը յաջորդէր, երբեք չէր զօրեր ուժի թե-
լադրութիւն մը ընել՝ իր կեանքին մարելու
մօտ կանխելը վառ պահելու, և անոր աղօտ
լոյսերուն խուրձերէն առաջնորդուած գըտ-
նելու բուն իսկ իր դիրքին, իր բաղձանք-
ներուն, իր ներմարդուն մեկնալէտը : Իր
անձը ալ չէ՛ր հետաքրքրեր իրնքը . փշրուած
խեցանօթի մը կտորուանքին պէս զանի կոխ-
կըռտած էր իր ոտքերուն տակ : Իր մտա-
ծումը իրմէն դուրս ապրողի հրայրքը միայն

ունէր . ու այդ մտածումի և մարմինի պա-
ռակտումը, պատճառ եղած էր որ, ինքզին-
քին վրայ նայի, իբրեւ հեռաւոր ծիանքներու
և մշուշներու մէջ կորսուած, և վայրկեանէ
վայրկեան անյուսօրէն ընկղմելու վտանգին
մէջ եղող սունկի մը վրայ : Իր այս մտածու-
մովը յաղեցած, այլ եւս չէր ներեր իրեն
համար եղած ո՛ր և է զոհողութիւն, խնամք,
ըլլա՛յ իրեններէն թէ իրմէն : Հեռացաւ նոյն
իսկ գիրքերէն, ու մեղքացաւ մօմին, որ իր
հիւանդի խուցը կ'աղօտափայլէր : Եւ օր մը
իր գրքին լուսանցքին վրայ յուսահատ սրա-
միտի մը սա թառերը գրեց . իբրեւ վերջինը
իր մտքի արտագրութիւններուն . «Մնաք
բարով, դուք ինձի հինգ սուի մօմ վառել
կու տաք, մինչդեռ չէք տար ինձի բան մը
որ դէնար մը արժէ» : Դրամապաշտի մը մը-
տածումները չէին, որ զինքը այդ խորհրդա-
ծութեան կը մղէին . բնաւ : Չվայելուած,
ու անյուսօրէն երազուած կեանքի մը յափ-
րացումը որ մի միայն վայելք կը փնտռէ
ամէն մէկ քայլափոխի, ալ ինքզինքը անար-
ժան կը գտնէ այն ամէնուն, որոնք իր ան-
ձին ըմբօշխնել կը արուէին : Այդ կենդանի
դիակնացումին առջեւ վառուած կանթեղ մը
մեռելոյթի մը սարսուռները միայն կրնար
սեւադրել՝ արդէն իսկ խանգարուած սեւե-
ռամտածումի մը հանդէպ : Եւ այդ մօմը,
ինքն էր, որ կը հատնէր գիշերին մէջ, և իր
հատնող՝ վատուժ կեանքը չէր վարձատրուեր
բանով մը : որ արժեցնէր ապրելու իր զոհո-
ղութիւնը :

* *

Անցան ծովալողանքի օրերը, բայց ան
տակաւին կը շարունակէր իր ծովագնացու-
թեան կեղծիքը : Մտածում մը, սեւ հովի
մը պէս, զինքը կը տանէր կը բերէր շարու-
նակ, ինքն ալ չէր գիտեր թէ ի՛նչ էր այն
դանդաղ տարտամութիւնը, որ զինքը միշտ
գամուած կը պահէր ծովափի քարերուն : Իր
մէջ չէր զգար բան մը, որ իրեն իրաւունք
տար կապուած մնալու այդ հողին ու քարե-
րուն, որոնք անգթօրէն իրենց միօրինակու-
թիւնը կը ցցէին իր թնձուք տարփոփոխու-
թիւններուն հանդէպ : Եւ այդ միօրինակու-

թիւնը կը յոգնեցնէր զինքը, կը փղձկեցնէր, արգահատանքի ցաւոտ ճիւղ մը փրցնելով իր կուրծքէն, որ թափուր ու մաշուած վանդակի մը պէս խարխուլած կը մնար իր դողդոջուն ոտքերուն վրայ:

Կեանքին թռչունը դադրած էր երգելէն. ու բու մը միայն կը խօսէր իր ներսը: Եւ մահուան հեշտանքը կը մեծնար իր մէջ. որ աւուր աճող աշխարհատեցութեան իր նողկանքին հետ: Եւ այդ երկու ահարկութիւնները երկու մեծղի սատանաներու պէս թեւ առած, զինքը կը տանէին դէպի իր չհասկըցուած նպատակակէտը, դէպի ծովը, որուն հետ միայն հաշտուած էին իր անմիտի մտածումները, իր աշխատեցուած բաղձացումները:

Ցուրտ քամի մը կը փչէր ու ծովը ալ աւելի կը կայթէր իր կապարաշոյն ալիքներու բբուկին տակ, որուն խորէն սուր ոռնումի մը, դժոխային պարերու վայրենի նուագերգութիւնը կը լսուէր: Ուրիշ օրերու իր սովորական մտազբաղումէն ձգտուած, թողուց իր մենակեացի սենեակը. վերջին ակնարկ մը նետեց իր գրադարանին ու գրասեղանին վրայ, որոնք ամայացած ժամու մը փոշոտած սեղանին կը նմանէին հիմա, և այդ խորունկ նայուածքը, օրհասային հրաժեշտի մը նախատօնը կը բուրէր ակամայօրէն: Իր ծովի լողանքին ծրարը անութիւն տակ, սովորական գնացքով մը վար իջաւ սանդուխներէն, առանց բառ մը փոխանակելու իրեններուն հետ, որոնք՝ գիտակցած իրենց զաւկին ախտացած տենդաւորումին, չէին ուզեր հարցումով մը խզել անոր խորհրդաւոր, մեռելայոյզ լուծիւնը: Ու երբ ալ դուրս ելաւ դռնէն, մայրը երկաւր, չատ երկաւր նայեցաւ իր զաւկին ետեւէն, որ ստուերի մը պէս կը քալէր՝ դողդոջուն ու երերաբեկ. և իր նայուածքը հանդիպեցաւ տղուն յետսագարձ՝ ակամայ նայուածքին, որ, աւանդ, վերջինը պիտի ըլլար՝ իր մարմինի գերեզմանական խորութիւնէն դուրս բերուած:

Վերջին լողանքն էր որ առաւ...

Եւ գիշերը, արհաւիրքներով լեցուն գի-

շերը, որ հանդիսատեսը եղաւ այս լուռ մահացումին, ուզեց աւելի շեշտել իր մեծութիւնը, և փնտռեց տեղ մը, ծնելու իր սարսուռի յղութիւնը, ամայութիւններու գիրկը, երբ ալ լուսաւորները լոյս չէին քրտնիր, և երբ լուսինը դադրեցուցած էր իր կաթիլ լուգանքը կապոյտ երկինքին ծովին մէջ:

* * *

Մայրը իրիկունէ իրիկուն կըսպասէ իր տղուն, աչքը ծովին յառած, ու լսելով անոր խորհրդաւոր մրմունջները: Եւ ամէն անգամ որ դուռը կը զարնուի, ան՝ խելաքեղ՝ վար կը վազէ փնտռելու իր կորսուած զաւակը, որուն իրիկունէ իրիկուն կը սպասէ: Բայց ան՝ ա՛լ չպիտի վերադառնայ:

Մայրը պիտի սպասէ դեռ, իր աչքերուն մէջ չորցած արցունքի կաթիլով մը, մինչ ծովը, հովէն ու փոթորիկէն ուռած, ցաւազին մռնչիւնով մը պիտի դայ զարնուիլ խաբակներուն, ուրկէ խեղճ տղան ծով նետած էր ինքզինքը, աւելի խաղաղ, աւելի խորհրդաւոր մեծ շարժնութեան մը մէջ փրնտուելու իր ա՛լ բզքտուած հոգիին գոհացումը:

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

(Արեւելք)

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐԷՆ ՔԱՂՈՒՍԺ

Ուրբաթ

Պատահումով 1892—1893 տարուան Մաւիթները ձեռքս անցան: Պէտք է ըսեմ որ առաջին անգամը չէ որ կը թղթատեմ, կը կարդամ զանոնք: Բայց այս վերջին ընթերցումովս սա համոզումը գոյացուցի թէ, մեր գրականութիւնը այն ատենուան լրագրութեան մէջ կը խտանար և ո՛չ թէ հիմակուանին մէջ: Երբ չատեր մեր արդի գրականութիւնը այսօրուան օրագրութեան մէջ ամփոփուած կը տեսնեն, չա՛տ կը սխալին, վասն զի ժամանակակից հաստարակութիւններուն մէջ կը պակսին այն լրջութիւնը, ուսումնասիրութիւնը, գաղափարի կեանքը որոնք անհրաժեշտ են ճշմարիտ գրականութիւն մը

կազմելու համար: Ըսած իս չա՛տ չուտ պիտի համոզուիս եթէ քիչ մը համբերութիւն ունենաս երէկուան ու այսօրուան մեր ունենցած լրագրութիւններուն մէջ բազդատութիւն մը ընեելու:

Մասիսի 1892 և 1893 թ տարիները կրնան ատաղձներն ըլլալ ապագայի հայ գրականութեան մը:

Ամէն գրութիւն՝ հոն, հեղինակին անձնական փորձառութիւնէն, համոզումէն, բմբռնումէն, գլխաւթիւնէն ծնունդ առած է, այնպէս որ բոլոր յօդուածներն ալ մի՛ւսն ոյն լուրջ և համբերատար ուսումնասիրութեամբ, ոճի քիչ չատ մաքրութեամբ, սովորականէն շատ բարձր մտածումով մը հրատարակուած են:

«Վարժապետին աղջկան» հեղինակին ուսումնասիրութիւնները՝ եղիա Տէմիրճիպաշեանի և Ալֆոնս Տոտէի վրայ, և իր այնքան սիրուն նորավէպերը Հովկուր ու Բնկուզի կողովը, պատուական կտորներ են, որոնք եթէ նոյնիսկ եւրոպական ո՛ր և է լեզուի մը թարգմանութիւն, չա՛տ հաճոյքով պիտի կարդացուին: Արդէն, երիտասարդ գրագէտին մէկ գէշ գրութիւնը կարդացած ըլլալս չեմ յիշեր:

Զօհրապին յաջող նորավէպերը, Մանօթ Դէմքերու շարքը, և կուռ խմբագրականները կան, խմբագրականներ որոնք եթէ հիմա իսկ արտատպուին, մի՛շտ նորութեան հմայքովը պիտի կարդայինք զանոնք: Օրինակի համար «Անբարոյական Գրականութեան» վրայ խօսած ատեն, անանկ բաներ գրած է որ, կարծես թէ այսօր գաղափարուած են անոնք: Անբարոյական գրականութիւն ըսուածը, եթէ ունինք, չե՛մ գիտեր, օրուան նիւթ եղած է այսօր ալ: Ամէն մարդ մէյմէկ բան կ'ըսէ՝ վերջապէս: Տեսէ՛ք ինչ գրած է Զօհրապ ասկէ տասներկու տարի առաջ. —

«Միանգամ ընդմիջող ըսենք ամէն անոնց որ տարբական ճշմարտութիւնները ըմբռնելու ընդունակ են, թէ անբարոյականութիւնը մարմնական զեղծմանց մէջ չի կայանար միայն...»

«Սիրոյ վաճառականութիւնը մեղադրելի

է անո՛ր համար անշուշտ որ կեղծիքի առուտուր մըն է, և սակայն որքան մարդիկ ապրուստին կը ճարին օրն ի բուն իրենց սիրտն ու հոգին կեղծելով...»

«Գրականութիւնը իր նպատակովը միայն կրնայ բարոյական կամ անբարոյական հըռչակուիլ, նկարագրութիւնները՝ արուեստական խնդիրներ են, որոնք չեն կրնար երբեք անբարոյականութեան համար իբրև փաստ յառաջ բերուիլ...»

«Եթէ երբեք ակտարոյր կամ ցանկացողի տեսարանի մը նկարագիրը բաւէր հեղինակը անպարկեշտ ու անբարոյական համարուելու՝ գիտէք որ նախնի ու արդի աշխարհական կամ սրբազան մատենագիրներէն զերեթէ ոչ ոք դուրսը պիտի մնար: Հելլենական գրականութիւնը նախ պէտք էր կրակը նետել իր դիցաբանութեանը հետ: Գրականութիւնը այն ատեն միայն անբարոյական է՝ երբ իր առաջադրած նպատակն ըլլայ ընթերցողները ցանկութեամբ ու տարփանքով վարակել...»

«Ո՛չ, մեր բնտանեկան բարքերը, մեր գրականութիւնը հեռու են ապականութեամբ վարակուելէ: Այդ ձրի զրպարտութիւնը բանով մը չարդարանար, և եթէ հարկ անհրաժեշտ է յանուն բարոյականի պայքար մը մղել մեր մէջ, նիւթեր չեն պակսիր ափսոս, որ իրօք արդարայնեն անբարոյականութեան ամբաստանութիւնը...»:

Կը ցաւիմ, Զարուհի՛ս, որ ժամանակ չունիմ այս սքանչելի խմբագրականը ամբողջովին արտագրելու: Բայց կը խոստանամ Մասիսը զրկել քեզի, կարդա՛ և ուսումնասիրէ:

Ուրիշ աշխատակիցներու նորավէպերն ալ, յաջողութեամբ գրուած, գրական բաւական մեծ արժանիքներ ունին ինծի համար: Ամէնքն ալ իմ աչքիս մէջ մէկ գիրք կ'արժեն, այնքան ազուր են նիւթերը, գաղափարները, բացատրութեան եղանակները: Բա՛ն մը կը հասկնա՛ս վերջապէս, զանոնք կարդալով, բա՛ն մը կը զգաս:

Շաբաթ

Կեանքի ճակատագրային դժբաղդութիւններ բզբռած են սիրտս, վայրկեանէ վայր-

կեան ապրելու զգուանքս, դժգոհութիւնս, մտասանջութիւնս աւելի՛ կը շեշտուին հոգիիս մէջ և անօրինակ, տրտմագին թաղծութիւն մը կը ձիւնէ ամբողջ տենջանքներուս ու անուրջներուս վրայ: Էութեանս մէջ դեռ կանուխէն, այս տարիքիս մէջ իսկ, անյագ կարօտի, պատրանքներու, անյուսութիւններու սարսուռները զգացած եմ, և խտէական ըղձանքներուն անկարելիութեան հեծկըտուքը խղճած եմ կոկորդիս խորը:

Աշխարհիս ամէնէն սոսկալի տանջանքը ինձի համար, անորոշ, տարտամ սիրոյ մը մէջ ապրիլն է, սիրական Ձարուհի՛ս: Մարդ պէտք է գիտնայ թէ ո՛ւր կը դիմէ, որո՞ւն համար կ'ապրի, ո՞վ իր վրայ կը խորհի: Շատ ա՛ղա՛մ երջանկութիւն չի՞ սեպուելի սիրային փոխադարձ վստահութիւն մը:

Կիրակի

Յաւով կարդացի այն հեռագիրը որ Ձեխովի մահը կը գլոժէր, Սէն-Բեդեքսպուրկէն:

Սիրած օտար հեղինակներէս մէկն եղած է Ձեխով, որ իր վրայ զրազէտի մը բռնոր յատկութիւնները կը միացնէ, երբեմն զւարթ, երբեմն յուստես, մերթ խորհող, մերթ երազող, մի՛շտ վերլուծող, ուսումնասիրող: Գառսունճոյրս տարեկան հազիւ կար հէք զրազէտը, դեռ երիտասարդ, թէ և փառքի ծաղիկներով չըջացատուած: Նախ բժշկութեան ուսանող եղած է Ձեխով, բայց ուրիշ շատերու պէս չկրնալով դիմագրել գրականութեան կիրքին, ինքզինքը անոր գիրը նետած է, նորավէպի առաջին հատորով մը, որ յաջողութիւն չէ գտած սակայն: Ասիկա չի նշանակեր անշուշտ որ միշտ միջա՛կ մը մնացած է Ձեխով գրականութեան մէջ: Ընդհակառակը: Իր նորավէպի հատորները ղինքը համաւաւի մը արայուցած են, արժանաւոր համար մը արդարեւ:

Սափայիքի կղզիքն, որ աղաւորութիւններու և յիշատակներու հաւաքածոյ մըն է, այնքան խօսքերու, ընդդիմախօսութիւններու, վիճաբանութիւններու տեղի տուած է: Իր ամէնէն յաջող թատրոնգութիւնը, Իվանովը և կամ Միլեքն է, կ'ըսեն: Դեռ այսօրուսն պէս կը յիշեմ քանի մը տարիներ

առաջ իրմէն կարդացած մէկ նորավէպս, որ կեանքիս վրայ մեծ ազդեցութիւն ըրած է: Արտագրելուն տարիքը հիմա՛ էր, դեռ չապրած մեռաւ:

Նշեցայ որ կրկնէ որ չէ մեռած ան, չեմ դիտար իրա՞ւ կ'ըսէ թէ, Ձեխովին ապրելու սահմանուած գրականութեանը կ'ակնարկէ:

Ներկուաբքի

Քեզի արձակ բանաստեղծութիւն մը պիտի ղրկեմ այսօր. բայց մի՛ հարցնէր որուն ուղղուած ըլլալը, քանի որ գիտես թէ ո՛վ գրած է, և խօսք տո՛ւր որ ո՛չ ոքի պիտի կարդաս դայն:

Աւելի աղէկ պիտի ընեմ, հոս ընդօրինակելով, որովհետեւ կ'ելլես կը կորսնցնես բո՛ւն ձեռագիրը:

«Ի՛նչ միամտութիւն, Աստուած իմ:

«Անոր առեղծուածային էակի գաղտնիքին թափանցելու միամիտ, խենթ վայրկեաններ կ'ունենամ:

«Կուգեմ, գոնէ պահ մը, անոր իտէալին տեղը անցնիլ, իր կուսական թաքուն ու անձեռնմխելի հեշտութիւններուն, թարմութիւններուն նեկտարը սպնդելու համար տենջանքէն այրող ու յաւիտենապէս անյագ, կարօտակէզ շրթունքներովս: Անոր յուզումնալից գգուանքներուն և զրգոյի, կեանքոտ սիրաբանութիւններուն համը առնելու համար՝ կուգեմ վայրկեան մը գոնէ, անոր իտէալին տեղը ըլլալ: Ահ, այդ իտէալը...

«Կը փափաքեմ, իրեն այնքան վայելուչ ճերմակներուն, ճեփ ճերմակ սնդուսէ վտաւակը ըլլալ, բումբերուն զգլխիչ կորութիւնները կաղապարելու համար մեզկօրէն, ձի՛գօրէն, պաղշոտութեամբ:

«Ձիւնաթոյր քօղ մը ըլլալ՝ անոր հրեշտակային գէմքին, ու ծիածնապեղ շրթութիւններուն բարեկամը մնալու համար միշտ:

«Այսօր ալ, ան պահուն, դարձեալ խօլ միամտութիւնը կ'ունենամ ճեփ ճերմակ, — իր ու իմ սիրած գոյնս, — ձիւնասպիտակ շիրիմ մը ըլլալու, բեւեռագիր, առեղծուածային տապանագիրով, գոնէ այդ հրաշալիօրէն նրբագեղ, փափկանուշ էակին ո՛չ նուազ փափուկ ու անգայտ քունը օրօրելու համար

յաւիտեհապէս, երբոր ձիւնը դայ, ու երբոր գերեզմանատունը ամայանայ հովերուն բուռն թեւթափներէն, անհունին սառուցիկ դալկութիւններէն...» :

Կ'աղաչեմ, Զարուհի՛ս, նորէն կը կրկնեմ որ մարդու կարգաւ չիտաս այս արձակ քերթուածը :

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԲԻՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

Ատամնաբուժութիւնը իրրե գիտական— բժշկական արուեստ մը՝ երկարատե ուսումնասիրութեամբ ու խզճամիտ փորձառութիւններով սորվելու ջանք մը կը տեսնուի, վերջին ժամանակներս, հայ երիտասարդներու քով : Ասոնց մէջ առաջիններէն մէկը կը հանդիսանայ Մկրտիչ էֆ. Էքեան (եղբայր՝ Պանոսըմա—Պալքէսէրի անտառային քննիչ Յովսէփ էֆ. Էքեանի և Միքայէլ էֆ. Էքեանի՝ ճարտարապետ ի Կ. Պոլիս) որուն արտակարգ յաջողութեան լուրերը կը հասնին ֆրանսական ոստանէն : Այս երիտասարդը, որ արդէն իսկ ճարտարօրէն կ'իրարկէր իր արուեստը Բերայի մէջ, ուր իրեն յատուկ atelier մըն ալ ունէր, այնքան բուռն սէր մը կը տածէր իր մասնագիտութեանը վրայ, որ զայն գիտականօրէն կատարելագործելու և վարպետ մը ըլլալու բաղձանքով, բաւական տարիներ առաջ Յրանսա ուղևորեցաւ : Իր փափազն էր ո՛չ միայն Ատամնաբուժական Վարժարանի չրջանն աւարտել՝ այլ նաև Բարիդի Բժշկական Համալսարանէն ալ վկայուիլ : Երիտասարդ ատամնաբայժը Académie des sciencesի առջև յաջող քննութիւններ անցունելով կը մտնէ Ecole Dentaire որուն չրջանը կ'աւարտէ ու վկայականը կըրտանայ :

Կը մնար Faculté de médecine ուսկից վկայական ընդունիլն իր իտէալն էր : Բայց ասոր համար, հարկ էր երեք մեծ ու զըծուարին քննութիւն անցունել, որոնց վերջինը Հիւանդանոցի մէջ, գործնական կերպով : Արդ, հաճոյքով կ'իմանանք թէ Մըկըրտիչ էֆ. Էքեան, լուրջ ու երկարատե աշխատութեան մը շնորհիւ՝ փայլուն կերպով

անցուցեր է այդ քննութիւններն ալ և Բարիդի Բժշկական Համալսարանէն ստացեր է chirurgien—dentisteի վկայականը որ իրաւունք կուտայ իրեն՝ իր արուեստը գործադրել նաև Յրանսայի մէջ : Տօքթ. Էքեան Zonol անուն ատամնաբուժական դեղի մըն ալ հնարիչն է և արդէն իսկ ծանօթ անուն մը ունի ի Բարիդ ուր գործնական յառաջդիմութեան ճամբուն մէջ կը գտնուի :

Ոչ նուազ հաճոյքով կը կարդանք Արեւելի մէջ, թէ Բարիդի Բժշկական Համալսարանի ընթացաւարտ Տօքթ. Արշարունի՝ յաջողութեամբ անցունելով իր վերջին քննութիւնները, ստացեր է Տօքթօրութեան վկայականը : Երիտասարդ բժիշկը իր թվիկն նիւթ ընտրած էր թիֆոյի complicationներէն մէկը որ լաւ ուսումնասիրուած չըլլալուն՝ յաճախ կը չփոթուի թոքախտին հետ : Քննիչ մարմինն նախադաս Բրօֆ. Տիէօլաֆուա մասնաւորապէս իր գնահատումը յայտնել է այս գիտական աշխատութեան կարեւորութեանը մասին, Տօքթ. Արշարունի Սանսարեան վարժարանի նախկին չրջանաւարտներէն է որ իր բժշկական ուսանողութեան առաջին տարիները Մոնթէլիէ անցունելով, անկէ Բարիդ փոխադրուած էր :

Ջերմապէս կը խնդակցինք Տօքթ. Մ. Էքեանի եւ Տօքթ. Արշարունիի՝ իրենց ունեցած յաջողութեանը համար՝ Բարիդի Բժշկական Համալսարանին մէջ եւ նշանաւոր բրօֆէսէօներու առջեւ :

ՍՏԱՅՍՆԻ Սմբատ Դաւթեանի մէկ նոր հրատարակութիւնը, Նուէր հայ մանուկներուն, պատկերազարդ փոքրիկ հատոր մը որ կը պարունակէ հեղինակին 33 ոտանաւորները, պարզ՝ սահուն աշխարհաբարով մը գրուած՝ ամէնքն ալ տղայոց յատուկ : Սմբ. Դաւթեան իր այս գողտրիկ հրատարակութեամբ մանուկներուն միտքն ու ճաշակը զարգացնելու կը հետամտի, դիւրահասկնալի ու սիրուն բանաստեղծութեանց շարք մը նուիրելով երկսեռ փոքրիկներուն :

ՀԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ

(ՍԻՐԵՐԳ)

Ամեն բանն զրկուած, նոյնիսկ կեանքի հանդիման,
Կը թափառիմ մեկուսի.
Նկո՛ւր փոխ, որպէսզի, գիրկըդ ինկած մեղկօրէն,
Յաւի հեծներս լամ քեզի:

Վայելիլու բաղձանքիս տրտնութիւնովն առլըցուն,
Ինչ ընելլս չեմ գիտեր:
Թերեւս պահ մը մոռցրնես, ծառան՝ անո՛ւն իղձերուն
Նայուածքներովդ ոսկեյեռ:

Աչքերս գոցե՛ մագերովդ ա՛յ չեսնեմ բնութեան
Վերազարթումն հեռայի.
Ամեն ծաղիկ կը բացուի, մինչդեռ հոգիս յաւիտեան
Նո՛յն ցաւերէն կը հալի:

Կուրծքիդ յսակ, դաւեաւոր համերգութիւնն ունկնդրեմ,
Ու ձեռներուդ փափկասուն
Թաւիւնն րզգամ զգուանոյս. հակե՛ս վրայ խրատիմ,
Դիւրեւոր խառնման այդ պահուն:

Կ'ուզեմ գիտնալ թէ սերով մարդ կը մոռնա՞յ ամեն բան.
Դրգանքիդ մեջ սիրայոյդ,
Համբոյսներուս մէջ տարփոս, տեսնեմ պիտի ա՛յ րզգամ,
Ձանձրութիւնը՝ ապրելուն:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄԱՐԳՐԻՏԸ

(ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆ)

Քու սիրունն ու մասաղ աղանջէդ, — որ վարդադոյնով ու ճերմակով շաղուուած է, —
մարգարիտէ՛ օղ մը կը շողայ՝ արշալոյսի արցունքի մը պէս դողդոջուն:

Անոր շուրջը կը հանդիմանին ոսկեղանգուր հիանալի վարսերդ. ու ինծի խեցի մը կը
թուի ան, որուն մէջ ծովը զետեղած է մեղմաբար՝

Իր նուրբ ու ճանաչելի մարգարիտը: Թո՛ղ սուր որ դէմքիդ վրայ հակիմ: Քանի որ,
խեցիներուն մէջ

Կը լսուի կոհակին ըսածը, ես ալ կ'ուզեմ լսել ինչ որ կ'ըսէ քու սիրտդ, ո՛վ երկնա-

յին խարտիչունի:

ԹԵՕՏՕՐ ՕՊԱՆԷԼ

Թարգմ. ՎԱՀՐԱՄ ԳԱՐԱԳԱՆԵԱՆ

ՍԻԵԼԱՆԲԱ

SIELANKA



ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Թարգմ. ՍԱՐՈՐԴԻ

հեղինակ ՍԷՆՔԻԵՎԻՉ

Տարածուն մարգագետնի մը վրայ, մը-
թաստուներ և խոր անտառի մը մօտիկ կը
կանգնէր անտառապահ Սթէփընին խրճիթը։
Յարգածածուկ էր ան և շինուած ծառի բո-
լորակ կոճղերով, որոնց թողած բաց միջոց-
ները մամուռը կը լեցնէր։ Բացը, խրճիթին
ուղղութեամբ, երկու չէնքեր կային. իսկ
առջևը կը գտնուէր չրջափակուած պզտիկ
արտ մը և ջրհոր մը իր կնճակով։ Ջրհորը,
որուն վրայ կ'երկըննային ջրոսպները, և կը
ծածկէին ջուրը, ցածն ինկած էր չեղ, կորա-
ցած եղերքներով։

Պատուհաններուն առջև կ'աճէին արեւա-
ծաղիկներ և վայրի բեղմնավարդեր, որոնց
սլացիկ և շնորհալի ծիղերուն վրայ նորածիլ
բողբոջներ կը վխտային թիթեռնիկներու
հոյերուն նման։ Արեւածաղիկներուն մէջէն
կը շարժէին գլուխները հարսնուկներուն,
բեղմնավարդերուն շուրջ կ'ոլորուէին ճեր-
մակ, փափուկ ոլոռներ ու պատուտակներ,
իսկ գետնին մօտիկ կ'աճէին հնդկոտեմներ,
դեղին քօքուսներ, անմեռուկներ, ոսկեգոյն
կովաքնձուկներ՝ դժգոյն, թօշնած, որովհետեւ
արեւին ճառագայթները չէին կրնար մինչև
անոնց թափանցել, բեղմնավարդերուն և
արեւածաղիկներուն մոխրագոյն սաղարթնե-
րուն մէջէն։

Շրջափակին մէջ, երկու կողմը ան արա-
հետին որ դէպի տուն կ'առաջնորդէր, բան-
ջարեղէններ անկուած էին— ինչպէս հն,
ստեպղին, ճակնդեղ և կաղամբ։ Անդին,
առանձին արտերու մէջ, հովի ամէն շունչ
վուշի կապոյտ բողբոջները ալիք ալիք կը
ծածանէր։ Աւելի հեռուն կը տեսնուէին մութ
կանաչորակ տերեւները գետնախնձորի տուն-
կերուն, իսկ տարածուն մարգագետնին վրայ
արմալիքի արտերուն գեղը — որոնք կ'եր-
կարէին մինչև եզերքը լճակի մը որ կողմնակի

կը թրջէր մարգը — մերթ բաց, մերթ մութ
մութ գոյներուն կը փոխփոխուէր։

Խրճիթին մօտ շատ ծառեր չկային, — քանի
մը կեռասենիներ մութ, շողշողուն սաղարթ-
ներով և երկար ու նուրբ ճիւղերով ցարասի
մը՝ այնքան կից խրճիթին՝ որ ամէն անգամ
սիւքը անոր կանանչ խոպոպները կը ցրդքնէր
մամուռապատ և յարգածածուկ տանիքին վրայ։
Զօրաւոր հովէ մը ցարասին կը հակէր դէպի
պատը, և երբ ծառը իր բոլոր սաղարթախիտ
ճի ղերով տանիքին կը դպչէր, մէկը կրնար
խորհիլ թէ ցարասին հիւղակը կը սիրէր, կը
գուրգուրար անոր վրայ և կը չրջապատէր
դայն իր բազուկներով։

Ցարասին վրայ ճնճղուկներ կը վխտային
և ծառին ճիւղերուն հանած ճոխնչը կը խառ-
նուէր անոնց ճուռոզումին և ձայներու խը-
լացնող ժխտին։ Աղանիները, գրաւած էին
եռանկիւնի կատարը խրճիթին, ո՛ւր միջոցը
լեցուն էր իրենց խօսակցութեան ձայներով։
Կը մընչէին և կը ջանային հրապուրել մէկը
մէկ, կարծես իրարու հարցումներ կ'ուղղէին,
խնդրանքներ կ'ընէին, բան մը որ սովորա-
կան է աղանիներու մէջ, — թռչուններու
զարմանալիօրէն ազմկայոյդ և շաղակրատ ժո-
ղովուրդ մը։

Երբեմն անծանօթ վտանգէ մը սարսափա-
հար, երբ խուճապով փախուստի կ'աճապա-
րէին իրենց բոյներէն, անոնց տենդոտ թեւա-
բախումները կը լսուէին խրճիթին շուրջ և
օդը կը լեցուէր՝ պտուտկելով թռիչներ գոր-
ծող ճերմակ թռչուններու բազմութեամբ մը։
Նախ յաւաքումնալից ժխտին կը լսուէր, յե-
տոյ իրենց պոչի գօրաւոր փետուրներուն բա-
խումները։ Յանկարծ եռանկիւնի կատարին
ամբողջ երամը դուրս կը թռչէր, եւ օդակ-
ներ ու չրջանակներ գծելով կը շրջաշրջէր օ-
դին մէջ, կը մօտենար, հեռուն կը թռչէր

եւ կը բաժնուէր կապոյտին մէջ. ձիւնափառ փետուրները մերթ կը շողշողային արեւին տակ, մերթ ամբողջ երամը կը կախուէր խրճիթին վրայ՝ աճապարոտ եւ յուզումնալից թռիչներ գործելով՝ եւ վերջապէս վար կիյնար ձիւնի բաթիլներու ամպի մը նման, եւ գորշ ու յարդածածուկ տանիքը կը ծածկուէր անոնցմով:

Երբ ասիկա սրտասէր արեւծագին եւ կամ իրիկնամուտին, երբ հորիզոնը շառագոյն բոցերով կը վառէր, արեւին ճաճանչներուն մէջ անոնց փետուրներուն ձիւնափառ ճերմակը վարդագոյնի կը փոխուէր եւ այն ատեն, կարծես, եղտիկ թռչող բոցեր, կամ ցրցըքնուած վարդի թերթեր էին այս թռչունները որ կ'իջնային տանիքին եւ ցարասին վրայ:

Իրիկունը, երբ արեւը մայրիններուն ետին մարը կը խոնարհէր, եռանկիւնի կատարին շաղկարատու թիւնները եւ ցարասին վրայ ճնճղուկներուն ճրուռողումները աստիճանաբար կը հանդարտէին: Ծնճղուկներն ու աղանձները իրիկուն ցողը կը թօթուէն իրենց թեւերուն վրայէն եւ կը պատրաստուէին հանգիստի: Երբեմն մէկը եւ կամ միւսը կը մնջէր կամ կը ճռուողէր դարձեալ, բայց ամէն անգամին ձայներն աւելի մեղմ, աւելի քնոտ չեշտեր մը կ'աւանդէին մինչեւ որ լուծ թիւնը կուգար տիրապետել վերջնականապէս:

Մթութիւնը երկինքէն երկրի վրայ կիյնար: Խրճիթը, կեռասնիկները եւ ցարասին տարտամ ուրուագիծերով իրարու կը խառնուէին եւ յետոյ կը մէկտեղէին համապարփակ մշուշին տակ որ լճակէն կը բարձրանար:

Մարգագեանին շուրջ, մինչեւ աչքին հասած տեղը, տխրատեսիլ մայրիններն ու մաքառը պարսպաձեւ կ'երկարէին: Հեղ մը միայն կը բացուէր այս պարիսպը եւ այդ բացուածքէն նրբացքի մը պէս կերկարէր եւ կ'ընդլայնէր հետզհետէ: Այս ընդլայնած նրբացքին մէջ լիճին ալիքները կը մըրմընջէին եւ կը թրջէին մարգագեանին ծայրը:

Լիճը այնքան տարածուն էր որ միւս մասը գրեթէ հեռաւորութեան մէջ կը կոր-

սուէր, եւ գոգցես աղօտ մէգի մը ընդմէջէն էր որ կը նշմարուէին կարմիր տանիքը աշտարակի մը, որ եկեղեցիին միւս կողմը կը կանգնէր, եւ մթաստուեր մաս մը անտառէն որ, եկեղեցիէն քիչ մը անդին հորիզոնը կը սահմանափակէր:

Մայրինները, իբր թէ հայելիի մը մէջ, բարձրէն լիճին աւազուտ ափին կը նայէին, եւ կարծես ուրիշ անտառ մըն ալ կ'ուրուագծուէր ջուրին մէջ: Երբ վերը անտառը շարժէր, կը շարժէր նաեւ անտառը որ ջուրին մէջ ուրուագծուած էր. երբ վերը ցամաքը աղմկուէր, կ'աղմկուէր նաեւ լիճը. երբ օդին անհուն անդորրութեան մէջ անտառը անշարժ կենար, միտպաղաղ եւ անխորշոմ ջուրը որոշապէս կ'ուրուագծէր իւրաքանչիւր ֆիկը մայրիններու ճիւղերուն, եւ ծառերը սիւններու շարքի մը նման գլխովար կ'երկըննային լիճին խորը, դէպի անսահման անհունու թիւն:

Լճին մէջտեղ ջուրը ցօրեկ ատեն կը ջուլացնէր արեւը, առտու եւ իրկուն կարմրորակ լոյս մը, իսկ գիշերը՝ լուսինը, եւ երկնքի զմըթթէն՝ որ մեր գլխուն վրայ կը կամարանայ՝ աւելի խոր, եւ արեւէն, լուսինէն ա'լ աւելի բարձր կը թուէր:

Խրճիթին մէջ կը բնակէին անտառապահ Ստէփըն եւ իր դեռատի աղջիկը՝ տասնութեց տարեկան Քասիան:

Քասիա այն պաշտօնն ունէր խրճիթին մէջ ինչ պաշտօն որ ունի Արուսեակը երկնակամարին վրայ:

Մաղկատի կոյսը դաստիարակուած էր Աստուծոյ վախովը եւ կը կրէր ամեղունակ սիրտ մը: Իր մեռած հօրեղբայրը որ ողջ եղած ատեն այլազան փուռերէ հաց կերած՝ եւ իր ծերութեան օրերուն ալ երգեհոնահար էր մօտակայ եկեղեցիին մէջ, սորվեցուցած էր անոր բարեպաշտիկ գիրքեր կարդալ, եւ ինչ որ թերի մնացած էր դեռատի աղջկան դաստիարակութեան մէջ, անտառին մեկուսի կեանքը ամբողջացուցած էր զայն:

Ժրաջան մեղունները աշխատութեան օրինակը տուած էին անոր. աղաւնիները՝ մաք-

րութեան, և մոխրագոյն ճնճղուկները՝ զը-
լարթօրէն ճռուողելու իր հայրիկին համար.
իսկ անդորրութիւնը միապաղաղ լիճին՝ սոր-
վեցուցած էր անոր անվրդովութիւն. եր-
կինքին խաղաղութիւնը փնտռող ըլլալ երկ-
րային խաղաղութեան. վաղադարձոյց ժա-
մին՝ բարեպաշտութիւն, և բարեացակամու-
թիւնը Աստուծոյ՝ հետամուտ ըրած էր զայն
ձգտելու մարդոց բարիքին:

Հետեւաբար Քոստիա և իր հայրը խաղա-
ղիկ կեանք մը կը վարէին և երջանիկ էին,
մենաւոր անտառի մը լուռ անդորրու-
թեան մէջ:

Հոգեգալուստի տօնին շաբաթ օրը, ան-
տառապահը կէսօրին տուն եկաւ: Անտառին
մէկ մասին մէջ պտոյտ մը կատարած և
դարձին մօրուտ և ճախճախուտ վայրերէ ան-
ցած ըլլալով, չափազանց յոգնած էր: Քո-
սիա հօրը ճաշը բերաւ. ճաշէն վերջ կերա-
կուրի պնակներն ու ամանները լուաց, շունը
կերակրեց և երբ ալ ամէն գործ աւարտած
էր, ըսաւ. —

— Հայրի՛կ:

— Ի՞նչ կուզես, պատասխանեց անտառա-
պահը:

— Անտառ պիտի երթամ:

— Գնա՛, գնա՛, թող գայլ մը և կամ
ուրիշ անպիտան դազան մը դիմաւորէ քեզ:

— Կանանչ տունկեր հաւաքելու պիտի
երթամ, վաղը Հոգեգալուստ է և պէտք է
որ եկեղեցին պճնուած ըլլալ ոստերով:

— Շատ աղէ՛կ, գնա՛ ուրեմն:

Քոստիա դեղին վարչամակով մը ծածկեց
իր գլուխը, որուն վրայ կապոյտ ծաղիկներ
ասեղնադորձուած էին, և սակառ մը փրնու-
ռելով տունկերը մէջը պահելու համար,
սկսաւ երգել. —

Օ, դեռափթիթ բազէն եկեր է...

Մոխրագոյն բազէն ե՛տ է դարձեր,

Մերունին, բարեացակամութեամբ սկսա-
յանդիմանել մանկամարդ աղջնակը—Առանց
երգելու գործ չէս կրնար տեսնել դուն,
ըսաւ անոր. սակայն Քոստիա որ ոտքի բութ
մատին վրայ ելած՝ դարակը կը խուզարկէր,
հօրը դարձուց իր դէմքը, ծիծաղեցաւ զը-

լարթօրէն, և ցոյց տալով իր կաթնաթոյր
ակունները, երգը շարունակեց կարծես նե-
ղելու համար ծերունին:

Ա՛ն կը ճչէ անտառին մէջ, իր սիրական
կկուն կը փնտռէ:

Անտառին մէջ զայն կը փնտռէ:

— Բարեբաղդ պիտի ըլլաս եթէ կարենաս
դուն ալ քեզի բազէ մը հրապուրել, ըսաւ
ծերունին. ո՛վ պիտէ, թերեւս բազէ մը
կպրծիլթի փոսին մօտերէն: Յիմարութիւն
է ատ, սակայն, երգելով պատառ մը հաց
անդամ չպիտի կրնաս չահիլ:

Որուն պատասխանեց Քոստիա, —

Օ՛հ, մի՛ ճչեր դեռափթիթ բազէ, մի՛
փնտռեր խեղճ բազէ,
Քու կկուդ խղիւռած է լիճին մէջ, ա՛ն
յատակն է հիմա:

— Է՛հ, տունը պահէ հայր, իրիկուն ըլ-
լալէ առաջ ետ պիտի դառնամ և կթեմ կո-
վերը, բայց պէտք է որ մէկը զանոնք կաղ-
նիի թաւուէն հոս քէ:

Մաղկահասակ աղջիկը գտաւ իր սակառը,
համբուրեց հօրը ձեռքը և դուրս ելաւ:

Ստէփըն վերցուց իր ցանցը դոր շինել
սկսած էր արդէն, խրճիթին դիմացի կողմը
գնաց և նստաւ հոն: Ձեռք առաւ թելերը
և ասեղ մը, գոցեց մէկ աչքը եւ ջանաց
դերձանը անցնել ասեղին ծակէն: Աջով
փորձեց, ձախով փորձեց, չի յաջողեցաւ, բայց
շարունակեց անցնել փորձել մինչև որ վեր-
ջապէս ճիշդ ծակին նշան առաւ, անցուց եւ
քաշեց թելը ու սկսաւ կարկտել ցանցը:

Երբեմն երբեմն, սակայն, կը վերցունէր
աչքերը եւ կը նայէր Քոստիային ետեւէն:
Քոստիա մինաւորիկ կը քալէր լճակին ձախ
ափէն եւ գեղազուարճ ափին եղերքին վրայ,
իբր թէ պատկերի մը մէջ, անոր շնորհագեղ
կերպորանքը կը տեսնուէր որոշապէս: Իր
ճերմակ շափիկը, կարմիր չրջագգեստը եւ
դեղին վարչամակը հեռուէն գունագեղ կե-
րեւնային ծաղիկի մը պէս:

Թէեւ տակաւին գարուն՝ բայց տաքը ան-
տանելի էր:

Երբ խրճիթէն կէս վերստ հեռացած էր
Քոստիա, մէկ կողմ դարձաւ եւ մտաւ մայ-

րիններու անտառը: Կէսօրը անցած էր եւ հակառակօղին սոսկալի տաքութեան՝ ան տառէն ներս զովութիւն մը կը տիրէր: Քաւիա չիփլիտակ առաջ կ'երթար՝ երբ յանկարծ կանգ առաւ ծիծաղկոտ եւ չիկնեցաւ կեռասի մը նման:

Արահետին վրայ, որ անտառին խորութիւններուն մէջ կը կորսուէր, իր առջեւը կեցած էր տասներեք տարեկան պատանի մը: Կարածիւթ եռացնող պատանին էր աս, որ անտառին ծայրը կը բնակէր եւ որ ճիշտ նոյն ատեն Ստեփանի խրճիթը կ'երթար:

— Օրհնեալ է Աստուած, ըսաւ կուպրեռացնողը:

— Դարէ դար:

Ծաղկատի աղջիկը լուռ էր եւ չփոթուէր: Զառափոյն աչքերը կը շփէր: Վերցոց գոգնոցը, ծածկեց դէմքը անոր տակ. նոյն ատեն գոգնոցին վարի ծայրերէն ժպիտով մը Եասիօյին նայելով:

— Քասիա՛...:

— Ի՞նչ է, Եասիօ՛:

— Արդեօք հայրդ տո՛ւնն է հիմա:

— Այո՛, տունն է:

Խեղճ կուպրեռացնող պատանին թերեւս էր ուղեր աղջկան հօրը մասին հարցունել, բայց չուարած ըլլալով, հակառակ իր կամքին կ'ընէր այդ հարցումը, պարտքեղու համար այն չփոթութիւնը որուն մատնուած էր: Լռիկ սպասեց հարցունելով ինքնիրեն թէ՛ արդեօք իրմէ առաջ բան մը պիտի ըսէ՞ր Քասիան:

— Եասիօ՛...:

— Ի՞նչ է Քասիա՛:

— Կարածիւթի փուռը այսօր չի՞ ծխար:

Շնորհալի աղջիկն ալ ուրիշ բանի մը մասին կուղէր խօսիլ:

— Ինչո՞ւ պիտի չի ծխայ, ան երբե՛ք չի դադրիլ վառելէ: Կաղ Ծրնէքը հոն թողուցի, բայց դո՛ւն, Քասիա, աղուեսի մը նման. ինչո՞ւ կ'արածիւթի փուռին կողմը կ'երթաս:

— Է՛յ, ես տունկեր հաւաքելու կ'երթամ կոր:

— Ես ալ քեզի հետ պիտի գամ, եւ եթէ չի մերժես՝ դարձիդ ալ մինչեւ խրճիթը պիտի ընկերանամ քեզի:

— Հարկ է որ մերժեմ:

— Եթէ զիս կը սիրես, մի՛ մերժեր, բայց եթէ զիս չես սիրեր, մերժէ՛ այն ատեն: Պատասխան տուր, Քասիա, բաւ մը ըսէ՛, — կը սիրե՞ս զիս:

Քասիա ծածկեց դէմքը իր ձեռքերով եւ ցած ձայնով մը մրմնջեց. — Ի՛նչ կրնամ ըսիլ, կը սիրեմ՝ քեզ Եասիօ, կը սիրեմ՝ մ, կը սիրեմ՝ քեզ հոգեւին: Եւ առանց սպասելու որ կուպրեռացնող պատանին պատասխան մը տայ, վար առաւ ձեռքը որով ծածկած էր չիկնած դէմքն ու փայլուն աչքերը, ու գոչեց:

— Տունկեր հաւաքելու երթանք, չուտո՞ւմ երթանք:

(Շարունակելի)

ԲՕՊԵՐԹ ԳՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կըսկսի Սեպտ. 2/15ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար: Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդչներուն և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարդի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ:

1—10

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐՇԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, Եւ. առաւօտ: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ.ի մէջ, և կէսը Յունուարի մէջ: Շաբաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օսմ. ոսկի և երկու դասի համար 5 օսմ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1 ուկէս ոսկի աւելի կը վճարեն: Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն ձրի կը զրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հառու, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ. Գավալճեանի, ատենապետ խնամակալութեան, Ատաբաղար:

1—8

ԽՄԱՐԻԱՐՔԱՆ ՆՕՐԵՐ

Խառն ժողովը իր շորեքշարթի օրուան նիստին մէջ գլխաւորաբար զբաղեցաւ Երուսաղեմի խնդրով որուն համար յատկապէս հրաւիրուած էր Գէորգ էֆ. Ասլանեան՝ իր տեղեկութիւններն ու տեսութիւնները պարզելու։ Նիստին կը նախագահէր Ս. Պատրիարք Հայրը ու կ'ատենապետէր Տիգրան էֆ. Եռասուֆեան։ Ներկայ էին, Կրօն. ժողովէն՝ Տ. Գրիգորիս Յովհաննէսեան, Տ. Եղիշէ Դուրեան և Տ. Գարրիէլ Սրբազանները ու երեք քահանայ անդամները. Իսկ Քաղ. Ժողովէն Տիգրան Տէր — Ներսէսեան, Միհրան Սեթեան և Մ. Ասատեան էֆ.ները։ Ժողովը լսելէ ետքը Ասլանեան էֆ.ի տեղեկութիւնները և կարգալէ ետքը Կարապետ էֆ. Սալաուրեանի Երուսաղեմէն ուղղած նամակները, խորհրդակցեցաւ ձեռք առնուելիք միջոցներուն վրայ, բայց քանի մը կէտեր լուսաբանութեան կարօտ դատելով՝ յառաջիկային վերապահեց իր վերջնական որոշումը։ Միեւնոյն ատեն, հեռագրեց Սալաուրեան էֆ.ի որ Պատրիարքարանի կողմէ ղրկուելիք հրահանգներուն սպասէ, Երուսաղեմէ մեկնելէ առաջ։

* * Ասլանեան էֆ. թէև չէր ընդունած Պատրիարքարանի քննիչ — պատուիրակի պաշտօնը, սակայն Երուսաղեմ գտնուած միջոցին քանիցս Վանք այցելած և թէ՛ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր և թէ՛ գլխաւոր միաբաններուն հետ տեսակցած ու տեղւոյ վրայ կացութիւնն ստուգած ըլլալով, սա համոզումը գոյացուցած է թէ հաշիւները Պոլիս բերել տրուին և երկու կողմի միաբաններէն ալ ներկայացուցիչներ հրաւիրուելով՝ հարկ եղած լուսաբանութեանց համար, այստեղ կատարուի հաշիւներու քննութիւնը, չեղոք ու ձեռնհաս աղբայրներէ կազմուելիք Յանձնաժողովի մը կողմէ զոր ընտրէ Կեդր. Վարչութիւնը։ Այս է ահա Ասլանեան էֆ.ի տեսութեանց եղբակացութիւնը, ինչպէս պարզած է Ս. Պատրիարքին։

Երեւաթքի, 20 յուլիս, տօն Ս. Մա-

ղաքիայ, Ս. Պատրիարք Հօր անուան տօնախմբութիւնն ըլլալով, շնորհաւորական այցելութիւնք պիտի ընդունուին Պատրիարքարանի մէջ։ Այս առթիւ, վաղը՝ կիրակի, պիտի կատարուի էթ — Մէյտանիի Մաղաքեան վարժարանին հանդէսը, հաւանաբար նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր։

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը որ այցելութեան ելած էր Հաճըն և Զէյթուն, յունիս 23ին Մարաշ ուղեւորեր է ուրկէ երկու քահանայ եւ մէկ քանի աշխարհական եկած էին իբր հրաւիրակ։

Արմաշի միաբան և Դայրեւանքի ներհուն ուսուցիչ Տ. Մեսրոպ վարդապետ Նարոյեան (Հարմալի) որուն գեղեցիկ մէկ յօդուածը հրատարակած ենք Մասիսի այս թիւին խմբագրական էջին մէջ, մայրաքաղաքս եկած է ամառնային արձակուրդի առթիւ։

Իզմիրէն հեռգհեռէ հասած լուրեր կը հաւաստեն թէ առաջնորդական միակ լուրջ ընտրելին կը մնայ Տ. Եղիշէ եպիսկ. Դուրեան որուն վրայ պիտի միանան Դաւառ. Ժողովին մեծամասնութեան քուէները և որուն վրայ, հեռուէն, մեծ համարում ու համակրանք կը տածէ Իզմիրի հայ համայնքը։ Դուրեան Սրբազան, որուն մայրաքաղաքս գալը ծանուցինք արդէն, այսօր վաղը Պանտըրմա կ'ուղեւորի՝ քահանայական ձեռնադրութիւն մը կատարելու համար։

Բարիզի Բժշկական Համալսարանէն երկու հայ ուսանողներու վկայական ստանալը ծանուցած ենք այսօրուան թիւով, մասնաւոր բաժնի մը մէջ։ Նորագոյն տեղեկութենէ մը հաճոյքով կիմանանք նաեւ թէ Արեւ. Մամուլի Տնօրէն — Խմբագրին հօրեղբորորդին, Պ. Մ. Մախուրեան, բժշկական միակ հայ ուսանողը Էտիմպուրկի Համալսարանին մէջ, իր աւարտականի քննութիւնները յաջողութեամբ անցունելով վերջին օրերս, բժշկութեան ու վիրաբուժութեան Տոքթօրի վկայական ստացեր է։

Հիմնադիր — Արսօմաթեր Կ. Ս. Իիթիօնիս
Պատասխանատու — Տօրէն ՏՈՒՅՔ. ԵԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիդի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չանած է, այժմ հաստատուած է. Բերա Պէօյիւք Բարմաք Գաբու, Թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ ատենցմէ դատ նորագոյն մեթոտներով կը բուժէ ջղային ու հոգեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցումէ (hystérie) անջ եկած հիւանդութիւնները, մասնակի անդամալուծութիւն եւ կարկամութիւն եւայլն: Ասկէ դատ, սոկորի եւ սո. վարակեան խօյը (սըրաճա), առանց գործողութեան՝ նոր դրութեամբ մը կը դարձանէ, տեղը առանց յայտնի ընելու: Տոքթ. Էմիրզէ էֆ. կը գտնուի, Բերա Պէօյիւք Բարմաք Գաբու, Թիւ 16 տան մէջ, ուր կիրակիէն դատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրքաթ օրերն ալ ձրաբար կը դարձանէ հիւանդները: 2-10

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պօլսոյ կայս: Բժշկական վարժարանին, անդամ Բարիդի Բժշկական համաժողովին:—Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական դործարան. Ներու հիւանդութեանց:—Պատուոյ վկայագիրք ունի Պէրլիէի, Լօնտոնի, Բեշթալի եւ ուրիշ երկրներու Ակադեմիաներէն:—Հնարիչ բժշկական դործիքներու եւ հեղիւնակ իրմտ սնագիրտութեան վերաբերեալ դործերու: Հիւանդ կ'ընդունի՝ Պօլսոյ կողմը, կամուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ Բերա, Թաքթիմ, Փրանսական հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.) 2-10

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵՋՈՒԻ

Պատկերազարդ 1000 հաւելի հշտեհ բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Նախկեաց բառերու նորաբանութիւններ, —գաւառական բառեր հանրագիրտական հատուածներ, երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրինագիրտութեան, ճարտարութեան: Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճօխ եւ դիւրատար բառագրքի մը պէտքը ընդհանուր եղած էր ցարդ: Ահա այդ պէտքը լրացնելու կոչուած է սա՛ն գործն, օգտուելով հայ եւ օտար բաղմութիւ բառագրքերէ: Խնամքով հետազօտուած են բառերու ճշգրիտ նշանակութիւններն, անոնց որոշ եւ ամփոփ սահմաններն, իրենց հակառիշերով ու համառիշերով, հին ու նոր պէսպէս առումներով: Զանց չէ առնուած նաեւ դնել բառերու ծագումն, կենդանեաց, բուսոց ուր

դասակարգութեան վերաբերիլ, ի հարկին անոնց թուրքերէն ու ֆռանսերէնն եւս:

Բացի բուն բառագրքէն՝ դործոյս ամբողջ ընթացքին մէջ՝ հանրագիրտական հատուածներ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրէնսգիրտութեան, ճարտարութեան, գործնական կենաց վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն: Թուղթ ազնիւ եւ տպագրութիւն ընտիր եւ խնամեալ, զարդարուած յատկապէս փարագրուած օրրուն եւ ճաշակուար պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրալին քաջալերութեան արժանի սոյն գերազանցապէս օգտակար դործոյն համար, 20 դասկան, Պօլսոյ, 25՝ գաւառաց, թղթատարի ծախուց համար եւ 6 ֆրանք օտար երկրներու համար:

Հեղինակին հասցէն՝

Կ. Պօլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 24



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻՆՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ



1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԻՆՆի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կ-ու-րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա-

գլուխ եւ փնտսուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պուսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,

1 10

ՅԱՄՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բուսկի նիւղեր

VICTORI
DE
BERLIN

ԼԻԲԻ ՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած ԿԵԱՆՔի ապահովագրութիւններ ունի վճարումները չարաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ից ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ից ար-
բայական հրովարտակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Պոլիս Բաքրեքոզլու խան

թիւ 45 եւ 45 Ե.

1-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան
(Դրասենեակ՝ Մահմաւա—փաշա, Թարազ-
լար, Մեծ Նոր Խմելի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը
մաքրուին աղառաած եւ փաշա թէ՛ մետաք-
սէ եւ թէ՛ բուրդէ ամէն տեսակ ընտիր գոր-
գեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց
որ եւ է արտա կամ հետք ձգելու: Ընդ-
հակառակը, բարձրալին նոր երեւոյթ մը
կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած
գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գոր-
գերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին
մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցե-
ցերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով մշա-
սած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ
պտարասակ նոր գորգեր, ինչ մեծութեամբ
ու ճաշակով որ սկզբի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղղուին
գրասենեակը:

Դիւրամաշելի պայմաններ:

1—10

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

r. Kiriakou Bander mali

Ջիդերու, լեարդի եւ սսամոֆի հիւանդու-
թեանց մասնագէտ

Բարիգի հիւանդանոցներուն մէջ գործնա-
կան փորձեր կատարելով վերագրեալ հիւան-
դութեանց համար մասնագիտութիւն ձեռք
բերած է: Իրեն դիմողները կը դարձանէ ամէն
օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համամ հիւան-
կան հիւպատոսարանին դէմ, թիւ 5 տունը,
իսկ առտունները մինչեւ կէսօր Պոլիս կամուր-
ջին գլուխը Բոսթաքի Արսէնաքի թիւ 71
դեղարանը: Քիչ ատենի մէջ կը դարձանէ
Ղալին տկարութիւններ, լուսնոտութիւն,
անդամալուծութիւն, գլխու ցաւ, սրտի բա-
բախում, անքունութիւն, արիւնքիտեան
ախտ, յօդացաւ, ստամոքսի հիւանդութիւն-
ներ, դժուարամարտութիւն, այգանդի հի-
ւանդութիւն եւ այլն: Դարձանման համար
ներարկութեամբ կրկնաբար կ'առնուին կը գոր-
ծած է: Երեկտրական դարձնի համար մաս-
նաւոր սրահ մը կայ:

1—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ բօնաֆիլէ պարանց

Մեծ—Շուկայ, Գիւլքիներու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր
հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սաւլ-
թան—Համամ, Միտիլլի Դրամատան դէմ
թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ Բօնաֆիլէի
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-
տակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տակաւնութիւն, եւ դիւրամա-
շելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոհ
Թողացած է իր բազմաթիւ յաճախորդները:
Կ'արժէ որ Շուկայ ելլող ամէն ընտանիք
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

1—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ. ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսին դ'մ

Գե. Նե. Շբ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

Բե. Գե. Ուր. օրերը 6էն մինչեւ 11¹/₂

Վիրակի օրերը ժամադրութեամբ 1—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԼՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակն)

ՊԱՏՈՒՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԲՍԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԶՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուի լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Գոքսի Լիօնի
Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. Յ. Մ. Ս. Ս. Ս.

Գրասենեակ, Պոլիս, Հաճօքուլօ խան, Թ. 52—53—54—55—56 2—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասեր եւ նորոգութիւնք ան.

Կատարեալ երաւեստորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղափներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՄԱՍՆԱՆՎԱԿԱՆ ՊԱՆԱՏԱՆ